

ՀԱՅ ԻՆՔՆԱԻՐԱՏ ՄԱՍՈՒԼԸ 1980-1990-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԱՆ

Հայ լրագրության պատմության արդի շրջափուլում ուրույն դեր ունի ինքնահրատ մամուլը: Խիստ գաղտնի պայմաններում լույս տեսնող այս թերթերն էին, որ դարձան ամբիոն՝ ազատության և անկախության, ազգային իղծերի իրականացման նպատակով ոտքի ելած ժողովրդի համար: Չնայած ժամանակին իր ունեցած նշանակալից դերին՝ ինքնահրատ մամուլը տեսաբանների կողմից բավարար ուշադրության չի արժանացել:

«Ինքնահրատ» տերմինը ծագել է 20-րդ դարի կեսերին՝ խորհրդային Ռուսաստանում: Ինքնահրատի՝ հենց Ռուսաստանում ի հայտ գալը մասնագետները պայմանավորում են այնտեղ տարբեր ժամանակներում գրաքննության մշտական առկայությամբ¹: «Նախկին ԽՍՀՄ տարածքում «սամիզդատը» սկիզբ է առել ստալինյան բռնապետության ընդերքում: Գեղարվեստական ինքնահրատ տպագրության վերելքը հատկապես կապվում է Սոլժենիցինի, Պաստեռնակի, Նաբոկովի, Ավտարխանովի, Բուլգակովի և ևս մի քանի այլախոհ հեղինակների գործերի անօրինական տարածման հետ»²:

«Ինքնահրատ» բառն առաջին անգամ գործածության մեջ է դրել ռուս բանաստեղծ Նիկոլայ Գլազգովը: Խորհրդային գրաքննության հպատակ խմբագրությունները մերժում էին տպագրել նրա ստեղծագործությունները: Այդ խոչընդոտների պատճառով Գլազգովը որոշեց իր ստեղծագործությունները հրատարակել անձամբ. 1952 թ. նա իր ձեռագրերի ժողովածուի անվանաթերթի այն հատվածում, որտեղ սովորաբար նշվում է հրատարակչության անվանումը, գրեց «Самсебеиздат»³: Ռուս հեղինակների կարծիքով, Գլազգովն այդ բառը ստեղծել է «Госиздат» («Պետհրատ») բառի համաբանությամբ: «Արդեն 60-ականների կեսերին հեզնական նորաբանությունը կրճատվեց, ու ի հայտ եկավ «Самиздат» «ինքնահրատ» տերմինը: Իսկ հետագայում այդ բառը կորցրեց հեզնական բնույթն ու գործածվեց ամենայն լրջությամբ»⁴:

Հայերենում «ինքնահրատ»-ին զուգահեռ գործածվում է մեկ այլ տերմին՝ «ոչ պաշտոնական մամուլ», որն ստեղծվել է ի հակադրություն

¹ Տե՛ս **Алексеева Л.** История инакомыслия в СССР, М., 1992. <http://www.memo.ru/history/diss/books/ALEXEEWA/index.htm>

² **Ն. Հայրապետյան,** Հայաստանում ժամանակակից մամուլի զարգացման մի քանի հարցեր (1988-1998), ժողովրդավարության զարգացումը Հայաստանում, Եր., 1999, էջ 28:

³ Տե՛ս «Մատենագիտություն նորանուն հայկական պարբերական մամուլի (1987-1996)», կազմող՝ Ն. Հայրապետյան, Եր., 1999, էջ 9, նաև՝ **Суетнов А.** Самиздат: Библиографический указатель, М., 1992, էջ 18:

⁴ <http://his.1september.ru/articlef.php?ID=200301102>

խորհրդային պաշտոնական լրատվամիջոցների: Ներսես Չայրապետյանը «ինքնահրատ» եզրույթը գործածում է նկատի ունենալով «ոչ պաշտոնական մամուլի» տպագրության եղանակը⁵: Մեզանում գործածվում է նաև ռուսերենից փոխառված «սամիզդատ» տերմինը:

Առաջին ինքնահրատները ոչ թե քաղաքական, այլ գրական-գեղարվեստական բնույթ ունեին: Ինքնահրատ եղանակով սկզբնական շրջանում տպագրվում էր խորհրդային տարիներին արգելված գրականությունը: Գեղարվեստական բնույթ էին կրում նաև առաջին ինքնահրատ պարբերականները. սրանք բանաստեղծությունների ժողովածուներ էին, որոնց յուրաքանչյուր համարում հրատարվում էին տասնյակ բանաստեղծների գործեր: Որպես առաջին ամսագիր հիշատակվում է Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) 1956 թ. լույս տեսած «Культура» («Մշակույթ») պարբերականը:

Առաջին հասարակական-քաղաքական բյուլետենը՝ «Информация» վերնագրով, լույս է տեսել 1956 թ. Լենինգրադում: Խմբագիր Ռևուտ Պիմենովը հասցրել է տպագրել 10 համար, որից հետո ձերբակալվել ու դատապարտվել է հակախորհրդային քարոզչություն իրականացնելու մեղադրանքով: Իսկ Մոսկվայում առաջին ինքնահրատը լույս է տեսել 1959 թ.: Դա Ալեքսանդր Գինզբուրգի «Синтаксис» («Շարահյուսություն») ամսագիրն էր⁶: Նշենք, որ արդեն 1960-ական թվականներից ԽՍՀՄ պետանվտանգության կոմիտեի՝ ՊԱԿ-ի գեկուցագրերում հիշատակվում է «ինքնահրատ» տերմինը: Ավելին, իրենց գաղտնի գեկուցագրերում ՊԱԿ-ի աշխատակիցները փաստում են, որ վերջին տարիներին ինքնահրատները որակական փոփոխություն են կրել: «Եթե հինգ տարի առաջ ձեռքից ձեռք էին անցնում գաղափարապես անկայուն գեղարվեստական գործեր, ապա վերջին տարիներին գնալով ավելի մեծ տարածում են գտնում ծրագրային-քաղաքական բնույթի փաստաթղթերը»⁷:

Չայաստանում ինքնահրատ մամուլը զարգացման իր ուրույն շրջափուլերն է ունեցել: Առաջին ինքնահրատն ի հայտ եկավ 1967թ: Մինչ այդ, սակայն, ինքնահրատ մամուլի ու այլակարծության դրսևորումների համար արդեն իսկ պարարտ հող էր ստեղծվել. 1965 թ. ապրիլի 24-ին՝ Չայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի օրը, ի հիշատակ անմեղ զոհերի, Երևանում քաղաքացիները երթ կազմակերպեցին: Առաջին անգամն էր, որ Խորհրդային Չայաստանում ցեղասպանության տարելիցին նվիրված մման լայնամասշտաբ միջոցառում տեղի ունեցավ, որին հետևեցին ձերբակալություններ: 1966 թ. նույն օրը կայացած ցույցի մասնակիցներին ևս ձերբակալեցին, դրանց թվում էր հետագայում Չայաստանի Չանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որին տասնօրյա վարչական կալանքի էին ենթարկել⁸:

Մեկ տարի անց՝ 1967 թ., Չայաստանում հիմնադրվեց ընդհատակում գործող «Ազգային միացյալ կուսակցություն» կազմակերպությունը: Վերջինիս անդամներին է վերագրվում հայերեն առաջին ինքնահրատ թերթի

⁵ Տե՛ս **Ն. Չայրապետյան**, նշվ. աշխ., էջ 28:

⁶ Տե՛ս <http://his.1september.ru/articlef.php?ID=200301102>

⁷ Նույն տեղում:

⁸ Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, Ընտրանի, Եր., 2006, էջ 667:

լույսընծայումը: Ընդունված է համարել, որ հայկական առաջին ինքնահրատը ԱՄԿ-ի «Փարոս» թերթն է: Հրատարակիչներն էին Հայկազն Խաչատրյանը, Շահեն Հարությունյանը, Վահան Զատիկյանը և այլք: Այն տպագրված էր ստանդարտ մեքենագրական թղթի վրա և բաղկացած էր չորս էջից: «Փարոս»-ի երկրորդ համարը՝ մեկ էջանոց մեքենագիր թռուցիկի տեսքով, լույս է տեսել 1971թ., իսկ 1973թ. տպագրվել է «Փարոս-2 (լրացուցիչ)» ինքնահրատը, որը եղել է նախորդի սկզբունքային կրկնությունը: «Փարոս»-ի երրորդ համարը, կրկին թռուցիկի տեսքով, շատ փոքր տպաքանակով լույս է տեսել 1974թ.: Յոթ տարի անց՝ 1981 թ., հրատարակել է ինքնահրատ թերթի չորրորդ՝ վերջին համարը. այն հրատարակել են նախկին քաղբանտարկյալներ Աշոտ Նավասարդյանն ու Ազատ Արշակյանը⁹:

«Փարոսի» առաջին համարի հրատարակումից մեկ տարի անց՝ 1968 թ., ընդհատակում գործող Ազգային միացյալ կուսակցությունը գաղտնի տպագրեց «Երկունք» ինքնահրատ ամսագիրը՝ 500 օրինակով: Սակայն պարբերականը տարածող խմբին ՊԱԿ-ի աշխատակիցները ձերբակալեցին և այլախոհության ու հակախորհրդային քարոզչության համար դատապարտեցին ազատազրկման¹⁰:

Վկայություններ կան, որ բացի «Փարոսից»՝ 1960-ական թվականների վերջերին հրատարակվել է մեկ այլ ինքնահրատ թերթ, այս անգամ՝ այլախոհ գործիչ Պարույր Հայրիկյանի¹¹ Ազգային ինքնորոշում միավորման կողմից: Այն կրում էր «Ցասում» անվանումը¹²:

Այսքանից հետո տևական ժամանակ Հայաստանում ինքնահրատ եղանակով թերթեր լույս չէին տեսնում: Մինչդեռ խորհրդային մյուս երկրներում, մասնավորապես Ռուսաստանում, ինքնահրատները, հակառակ իշխանությունների ճնշումներին, տպագրվում էին: Հայաստանում սառույցը կտորվեց 1987թ.: Սակայն սա չէր նշանակում, որ խորհրդային իշխանությունները, մասնավորապես ՊԱԿ-ը, թուլացրել էին հսկողությունը: Ընդհակառակը, նրանց մշտաթթուն աչքն ամենուր էր, պարզապես որոշակի փոփոխություններ էին տեղի ունեցել նաև հասարակական տրամադրություններում: Օգտվելով վերակառուցման տարիներին ընձեռված փոքր հնարավորություններից՝ Հայաստանում ստեղծվեցին նաև հասարակական կազմակերպություններ՝ «Մաշտոց», «Ձանգակատուն», «Ամբերդի վերականգնման ֆոնդ»: Թեև դրանք առերևույթ ոչ քաղաքական կազմակերպություններ էին, սակայն իրականում զբաղվում էին հենց քաղաքականությամբ:

⁹ ԱՄԿ անդամ Աշոտ Նավասարդյանն այլախոհության, հակախորհրդային քարոզչության համար ձերբակալվել և դատապարտվել է ազատազրկման առաջին անգամ 1969-71 թթ., երկրորդ անգամ՝ 1974-77 թթ., երրորդ անգամ՝ 1981-87թթ: Իսկ Ազատ Արշակյանը ձերբակալվել և ազատազրկման է դատապարտվել առաջին անգամ՝ 1974-77 թթ., երկրորդ անգամ՝ 1981-87 թթ.: Վերջին անգամ նրանք ձերբակալվեցին ու դատապարտվեցին հենց «Փարոսի» չորրորդ համարի հրատարակության համար:

¹⁰ Տե՛ս **Գ. Յազընեան**, Հայաստանի 1985-1991 թուականներու պարբերական մամուլը, Անթիլիաս, 2004, էջ 38:

¹¹ Քաղաքական դրդապատճառներով շուրջ 17 տարի կալանավայրում, այնուհետև աքսորում է անցկացրել նաև Հայրիկյանը:

¹² Տե՛ս **Գ. Անանյան**, Արդի հայ մամուլի լույսն ու ստվերը, Եր., 2001, էջ 10, նաև՝ «Ժուռնալիստիկա. Տեսության և պատմության հարցեր», պրակ Բ, Եր., 2001, էջ 95:

Ինքնահրատ մամուլը կանոնավոր կերպով սկսեց հրատարակվել 1987 թվականից: Ներսես Չայրապետյանը 1987-1989 թվականները անվանում է ինքնահրատ մամուլի շրջան. «Ոչ պաշտոնական մամուլի ինքնահրատ շրջանն իրավամբ ավարտվեց, երբ 1989 թ. նոյեմբերի 2-ին Չայոց համագոյային շարժման առաջին համագումարի առթիվ լույս տեսավ «Չայք» թերթի անդրանիկ համարը... Սրանով, սակայն, ինքնահրատ պարբերականները չվերացան և նույնիսկ այժմ, առիթից առիթ, երևան են գալիս»¹³: Շարունակելով մամուլի շրջանաբաժանումը՝ նա առանձնացնում է նաև հետևյալ շրջափուլերը՝ 1990-1991 թթ.՝ անցումային փուլ, 1992-1998 թթ.՝ ազատական մամուլի ձևավորման փուլ¹⁴:

1987-1990 թվականները հայ ինքնահրատ մամուլի պատմության մեջ համարվում են վերելքի շրջան, երբ դրանք բուռն ծաղկում ապրեցին:

1987 թ. մայիսին, ազատ արձակվելով Մորդովիայի արքայազարից, Պարույր Չայրիկյանը հիմնադրեց «Աշոտ Նավասարդյանի և Ազատ Արշակյանի պաշտպանության կոմիտեն»: Մի քանի ամիս անց այն վերանվանվեց «Քաղբանտարկյալների պաշտպանության հայկական կոմիտե»: Եվ այդ կոմիտեն 1987 թ. մայիսին ինքնահրատ եղանակով լույս ընծայեց Աշոտ Նավասարդյանի և Ազատ Արշակյանի պաշտպանության կոմիտեի «Տեղեկագիրը»¹⁵, որը տարածվում էր նեղ շրջանակներում, ուներ ոչ թե գաղափարախոսական, այլ գերազանցապես տեղեկատվական-փաստագրական բնույթ: Այն ավելի ճիշտ կլինի բնորոշել որպես հիշյալ կոմիտեի շրջաբերական, քան պարբերական՝ վերջինիս դասական իմաստով»¹⁶: 1987 թ. հոկտեմբերի 24-ին ինքնահրատ եղանակով լույս տեսավ «Անկախություն» թերթը:

1987-1990թթ. հայ ինքնահրատ մամուլի ոսկեդարն էր: Միայն 1988 թ. Չայաստանում լույս տեսավ ավելի քան մեկ տասնյակ ինքնահրատ թերթ, իսկ 1988-1990 թթ. մոտավոր հաշվարկներով լույս է տեսել երեք տասնյակից ավելի ինքնահրատ պարբերական¹⁷: Այդ ժամանակաշրջանի ինքնահրատ թերթերի գոյությունը պայմանավորված էր երկրում ստեղծված քաղաքական իրավիճակով՝ ծավալված Արցախյան շարժմամբ: Ինքնահրատներից ոչ բոլորը հրատարակվեցին կանոնավոր, տևական ժամանակ: Նրանց մի մասը երկու-երեք թողարկումից հետո դադարում էր:

1988-1990թթ. ինքնահրատ թերթերից կցանկանայինք առանձնացնել Ալեքսանդր Արզումանյանի խմբագրած «... և այլն», ԱԻՄ-ի «Անկախություն», «Ինքնորոշում», «Չայրենիք», ՀՀԿ կուսակցության «ՀՀԿ խոսնակ», «88», ինչպես նաև՝ «Գոյապայքար» երիտասարդական միության «Մաշտոց» ինքնահրատները: Սրանք մյուսներից առանձնանում են և՛ իրենց «երկարակեցությամբ», և՛ որակով:

Ինչպես արդեն նշվեց, ինքնահրատ թերթերը տպագրվում էին խիստ գաղտնի պայմաններում. դրանք հիմնականում հասարակ թղթի վրա գրամեքենայով տպագրված, լուսապատճենված թերթիկներ էին կամ լուսանկարահանված էջեր: Լույս էին տեսնում ոչ մեծ տպաքանակով: Ի տարբե-

¹³ Ն. Չայրապետյան, նշվ. աշխ., էջ 28:

¹⁴ Տես նույն տեղը, էջ 28:

¹⁵ Տես Գ. Յազըճեան, նշվ. աշխ., էջ 39:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տես Գ. Անանյան, նշվ. աշխ., 10:

րութիւն պաշտոնական մամուլի, որը վաճառվում էր կրպակներում, ինքնահրատները տարածվում էին գաղտնի՝ թռուցիկների նման: Հատկապես սկզբնական շրջանում ինքնահրատները չունեին հստակ պարբերականութիւն: Պատճառն ընդհատակյա կազմակերպությունների, այդ թվում՝ ինքնահրատ մամուլի հրատարակիչների նկատմամբ խորհրդային իշխանութան հետապնդումներն ու հալածանքներն էին:

Բավականին բազմազան էր ինքնահրատ թերթերի բովանդակությունը: Նրանք անդրադառնում էին այնպիսի թեմաների, որոնց մասին գրելն արգելված էր պաշտոնական մամուլի համար՝ ԽՍՀՄ կազմից Հայաստանի անջատում, Հայաստանի անկախ պետության հիմնադրում: Այս թեմաներն արծարծվում էին հիմնականում հրապարակախոսական ժանրի նյութերում: Ինքնահրատ մամուլում ներկայացվում էին նաև հայ ազգային գործիչների, մասնավորապես՝ Հայաստանի առաջին Հանրապետության գործիչների մասին նյութեր, արտատպվում էին հատվածներ նրանց ստեղծագործություններից և այլն: Ներկայացվում էին պատմական փաստաթղթեր, որոնք խորհրդային տարիներին կան փակ էին, կան հրապարակվում էին գրաքննության «գտիչով» անցնելուց հետո:

Ինքնահրատ մամուլում շատ էին նաև տեղեկատվական բնույթի նյութերը: Դրանք տեղեկություններ էին հաղորդում առաջին հերթին այդ օրերին ընթացող քաղաքական գործընթացների մասին: Հանրահավաքի վայրից ռեպորտաժների զուգահեռ՝ ինքնահրատները ներկայացնում էին նաև շարժման առաջնորդների ու ակտիվիստների ելույթները: Լայն անդրադարձ կար մարդու իրավունքների պաշտպանությանը, մասնավորապես՝ քաղբանտարկյալներին, նրանց դեմ հարուցված քրեական գործերին, դրանց վերաբերյալ արձագանքներին: 1988-1989 թթ., երբ ձերբակալվել էին «Ուրաբաղ» կոմիտեի անդամները, ինքնահրատները կանոնավոր կերպով անդրադառնում էին կատարվածին բոլոր մանրամասներով: Հայաստանի ինքնահրատ մամուլը սերտորեն համագործակցում էր նաև խորհրդային մյուս երկրների ինքնահրատ թերթերի, մասնավորապես՝ «Гласность»-ի հետ՝ արտատպելով նրանցից նյութեր, ինչպես նաև՝ «Ազատություն» ռադիոկայանի լուրերը: Այսպես, փաստորեն, ինքնահրատ թերթերը նոր լույսի ներքո սկսեցին բացահայտել իրողությունները, ներկայացնել այն, ինչի մասին խորհրդային իշխանությունների օրոք ընդունված չէր խոսել. «Պաշտոնական մամուլի նկատմամբ սրանք ունեին մի մեծ առավելություն՝ քարոզում էին ազատության և ճշմարտացիության լեզվով, ասում նախկինում յոթ փակի տակ պահվող մտքեր ու գաղափարներ»¹⁸:

Ինքնահրատ մամուլի առանձնահատկությունների և նրա ունեցած ազդեցության մասին խոսելիս առաջին հերթին հարկավոր է հաշվի առնել տվյալ պատմական ժամանակաշրջանի առանձնահատկությունները:

Խորհրդային Միությունում, որտեղ իշխում էր միակուսակցական ռեժիմը, հալածվում էր այլընտրանքային խոսքը, վերահսկվում և պաշտոնական գրաքննության էին ենթարկվում լրատվամիջոցները: «Կոմունիստական, մասնավորապես, խորհրդային մամուլը պլանավորված, կուսակցության և

¹⁸ «Մատենագիտություն նորանուն հայկական պարբերական մամուլի (1987-1996)», էջ 10:

կառավարության կողմից վերահսկվող համակարգ էր, որը մերժում էր և՛ մասնավոր հրատարակությունները, և՛ դրանց մրցակցությունը: Միակուսակցական մամուլին էր պատկանում որևէ նյութի հրապարակման մենաշնորհը: Թղթակիցների աշխատանքը դիտվում էր որպես պոզիտիվ լրատվություն, որը պետք է ծառայեր կուսակցության նպատակներին և ոչ թե մարդկանց շահերին»¹⁹: Նման պայմաններում ինքնահրատ մամուլի ի հայտ գալը չէր կարող աննկատ ու անհետևանք մնալ: Ինքնահրատ մամուլը բացահայտ քննադատում էր Կենտրոնին, մատուցում այլընտրանքային տեղեկատվություն ու գաղափարներ: Օրինակ՝ ինքնահրատ մամուլում լայնորեն արծարծվեց Հայաստանի անկախության գաղափարը. «Փարոսը» դեռ 1967 թ. գրում էր. «Հայ մտավորականության սրբազան պարտքն է ժողովրդի հետ միասին կարճ ժամանակում լուծել Հայկական հարցը նոր և ճիշտ ձևով, Հայ ժողովրդի իղձերը իրականություն դարձնելու՝ այսինքն՝ Հայաստանն ազատագրել Ռուսական լծից, դուրս գալ այսպես կոչված «սովետական կազմից» և հայտարարել Հայաստանն անկախ, չեզոք պետություն»²⁰: «Ազգային շարժման սկզբից մինչև օրս մենք միշտ ենթարկվել ենք Մոսկվայի կողմից կազմակերպված հոգեբանական և մարմնական ահաբերկչության: 1988 թվականը հայ ժողովրդի համար եղավ քաղաքական հասունացման և ճշմարտության հետ հաղորդակցվելու տարի: Ոչ մի կոտորած, ոչ մի սադրանք մեզ չպետք է կարողանա ետ պահել մեր պայքարից»²¹:

Այս առումով ինքնահրատ մամուլի առանձնահատկություններից մեկն էլ նրա բովանդակության խորապես ազգային բնույթն էր: Հանգամանք, որը դրսևորվում էր ինքնահրատ թերթերի անուններում, նյութերի թեմատիկայի մեջ, դիզայնի մեջ օգտագործվող խորհրդանիշ պատկերներում: Դա պայմանավորված էր Հայաստանում ծավալված այլախոհական շարժման ազգային բնույթով: Իսկ պատճառները նաև պատմական անցյալի իրողություններն էին, որոնք առկա էին հայ ժողովրդի գիտակցության մեջ:

Ինքնահրատ մամուլի մյուս կարևոր առանձնահատկությունը ծայրաստիճան քաղաքականացվածությունն էր: Կարևոր առանձնահատկություն էր նաև ինքնահրատ մամուլի ընդդիմադիր ուղղվածությունը: Այդ փաստը, թերևս, բնական է և միանգամայն հասկանալի. այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ ինքնահրատ մամուլը այդ օրերին սկիզբ առած Արցախյան շարժման խոսափողն էր, ըստ այդմ՝ նրա պայքարի անբաժանելի մասը:

Այս համատեքստում, ինքնահրատ մամուլը լուրջ ազդեցություն ունեցավ քաղաքական պայքարում. ինքնահրատը նպաստեց քաղաքական ընդդիմության գործունեության խթանմանը, հասարակության մեջ նրա գաղափարների տարածմանը: Այն ոչ միայն տեղեկատվության, այլև հասարակական կարծիք ձևավորելու միջոց էր: Այդպես ինքնահրատը վերածվեց քաղաքական պայքարի լուրջ միջոցի: «Պաշտոնական մամուլի վիթխարի տպաքանակի և հնարավորությունների համեմատ, ինքնահրատ

¹⁹ «Լրագրողի հակիրճ տեղեկատու բառարան», Pro Media, Եր., 2000, էջ 20-21:

²⁰ «Փարոս», 1967, № 1:

²¹ «Ինքնորոշում», 10 հունվարի, 1989, № 2:

մամուլը տարածման շրջանակներ և հասարակական մտքի վրա ազդելու հնարավորություններ գրեթե չունեն: Ինքնահրատների ուժը ժողովրդի և նրա ոգու մեջ էր, իսկ դա դրսևորվեց Արցախյան շարժմամբ, որը Հայաստանը վերածեց մի միասնական ամբողջության՝ մեկ սիրտ, մեկ մարմին, մեկ նպատակ՝ «Ղարաբաղ և Միացում»: Ինքնահրատ մամուլն ուներ մի հզոր դաշնակից և՛ ամենօրյա ցույցերում տարածվող բաց նամակները, պլակատները, քարոզչաթերթերը (թռուցիկներ), սրանք ստեղծվում, բազմացվում և տարածվում էին հեղեղի պես»²²: Այս համատեքստում ինքնահրատ մամուլն ունեցավ նաև հոգեբանական ազդեցություն՝ ըստ էության կոտրելով վախի մթնոլորտը քաղաքացիների մեջ:

Ինքնահրատ մամուլի միջոցով զգալիորեն վերափոխվեցին նաև լրատվության շրջանակները: Այլևս մամուլը սկսեց անդրադառնալ ոչ թե այն թեմաներին, որ նպատակահարմար էր գտնում իշխանությունը, այլ ինչ հետաքրքրում էր ժողովրդին: Ինքնահրատ թերթերը կոտրեցին լրագրության, լրագրողի աշխատանքի մասին մինչ այդ եղած կարծրատիպերը: Այսինքն՝ եթե նախկինում մամուլը ծառայում էր կուսակցության շահերին, ապա ինքնահրատները ծառայում էին հասարակությանը, մարդկանց, բավարարում այդ օրերի նրանց լրատվական «քաղցր»: Եվ նրանք եղան կամուրջը՝ հնից նորի անցման ճանապարհին:

Եթե ընդհանրացնելու լինենք հայ ինքնահրատ մամուլի պատմությունը, ապա այն կարելի է բաժանել 5 հիմնական շրջանի:

1. 1967-81 թթ.՝ նախնական. այս ընթացքում հիմնադրվեցին հայերեն առաջին ինքնահրատները, որոնք, սակայն, ճնշումների ու հալածանքների պատճառով երկար կյանք չունեցան:

2. 1981-87 թթ.՝ անկման. այս ընթացքում Հայաստանում պարզապես դադարեց ինքնահրատ թերթերի լույսընծայումը, քանի որ այլախոհների մեծ մասը գտնվում էր կալանավայրերում. այդ տարիներին այլախոհական գործունեությունը դրսևորվում էր արգելված գրականություն հրատարակելով ու տարածելով:

3. 1987-88 թթ.՝ վերակենդանացման. այս ընթացքում ակտիվ փորձեր արվեցին կրկին լույս ընծայելու ինքնահրատ թերթեր. սառույցը որոշակիորեն շարժվեց՝ շնորհիվ Գորբաչովի հռչակած «Վերակառուցման» ուղեգծի, քաղաքական հետապնդումների թուլացման և այլախոհների ազատ արձակման:

4. 1988-91 թթ.՝ զարգացման. շնորհիվ Ղարաբաղյան շարժման ծավալման բազմացան և նոր որակ ու շունչ ստացան ինքնահրատները:

5. 1991 թ.՝ ավարտական շրջան: ՀՀ անկախության հռչակումից և «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո վերացան թերթ տպագրելու համար պետական մարմինների արգելքները: Թեև դրանից հետո եղան որոշակի ինքնահրատների թողարկումներ, սակայն դրանք այլևս կրում էին ոչ պարբերական բնույթ և լույս էին տեսնում առիթից առիթ:

²² «Մատենագիտություն նորանուն հայկական պարբերական մամուլի (1987-1996)», էջ 10:

АРМАН ГАЛОЯН – *Армянская самиздатовская пресса 1980–1990 гг.* – Современный этап развития армянской прессы недостаточно изучен. Некоторые исследователи полагают, что нынешний её этап берёт начало в 1991 г., когда Армения стала независимой, но многие относят его к 1960-м гг., точнее, к 1967-му, когда появились первые номера самиздатовских газет. При советской власти, когда в стране существовала официальная цензура, а независимая мысль подвергалась гонению, самиздат явился для многих открытием и отдушиной.

Первой газетой армянского самиздата считается “Парос” (“Маяк”), которую нелегально выпускала действовавшая в подполье Объединённая национальная партия. С началом Карабахского движения самиздат пережил бурный подъём. В 1988–1990 гг. в Армении выходило более трёх десятков самиздатовских газет. Все они были крайне политизированы и освещали те вопросы, которые советская пресса замалчивала, выступали за свободу и независимость Армении. Самиздат сыграл важную роль в становлении современной армянской прессы.

ARMAN GALOYAN – *Self-Published Press in Armenia in 1980-1990.* – This article refers to the whole path that self-published press has gone through and its peculiarities. Besides, such aspects as the role of self-published press in the process of gaining independence on the formation of modern Armenian media and the Armenian political thought are also presented in this article.

First self-published newspaper is considered to be the newspaper “Paros” (“Beacon”) published by National United Party which operated underground in Soviet times. The first issue of “Paros” was published in 1967.

Self-published press started to be printed actively already in 1988, during the Karabakh movement. During those years more than ten self-published newspapers were printed. In three years (1988-1990) approximately more than three dozens newspapers were regularly published. Self-published newspapers carried stamps of time. They were extremely politicized. They presented a number of topics about which the Soviet press preferred to remain silent or which were usually represented in certain aspects allowed by censorship. Self-published press covered meetings, Armenian National Movement evolving in those days. An important role played also journalistic articles which advocated freedom, independence and ideas of national self-determination.